

եմ որ ոչխարները քեզ հնազանդում են ու սրնգիդ ձայնից գրաւուած քեզ մօտ գալիս են: Գետնից մինչև այդ բարձր աշտարակը—տեսնում ես նրան—դնել կը տամ փայտեայ սանդուխտը. դու կը նստես այնտեղ—բարձրում. ոչխարներդ կը ժողովւեն ցածրում: Ահա պայմանը: Եթէ դու բարձրից, սրինգ ածելով, կարողացար ոչխարներին սանդուխտի վրայով քեզ մօտ վեր հանել, այն ժամանակ աղջիկս քեզ հալալ, առ ու վայելիր: Ապա թէ ոչ՝ խայտառակ եղիր, ինչ ունես-չունես հաւաքիր և քանի շուտ է՝ այս կողմերից հեռացիր: Մի չորան՝ աղայի փեսայ չի լինիլ—այդ էլ խելքիցդ հանիր»:

Աղան իր բանը գիտէ: Սանդուղի ճիշտ մէջտեղի աստիճաններէն մէկը աղան կտրեց այնպէս, որ յայտնի չերևայ: Ոչխարները սրնգի ձայնով սկսան բարձրանալ սանդուղի աստիճաններէն. առաջնորդող այծը հասաւ թակարդին. «զգաց որ մահը առջևն է, բայց դիւթուած էր—ոտքը դրեց փայտի վրայ. փայտը շարժուեց. լսուեց մի մայիւն և սիրուն այծը պտոյտ գործելով օդի մէջ, գնաց ջախջախուելու անդունդի քարերի վրայ»:

Հասօն յուսահատեցաւ, բայց Զախէին նայելով սրինգը դարձեալ ձեռք առաւ: Առաջին ոչխարն ընկաւ, հետեւեցան երկրորդը երրորդը: Միւսները սկսան ետ գնալ: «Կատաղեց Հասօն—բացուածքը չէր տեսնում. որչափ սէր ունէր ու զգացմունք, ներշնչեց սրնգին. գեղգեղանքներով քարացրեց բնութիւնը... բայց ոչխարները ետ ետ էին գնում»:

Հասօն սկսաւ ածել լուր-դա-լուրը՝ «երգերի փառքը», «հրեշտակների մրմունջը», «Հասօի ոգին»։ Ոչխարները անդիմադրելի շարժումով մը առաջ նետուեցան ու շատերը գլորուեցան: Հասօն ծոցեցաւ և բացուածքը տեսաւ... Երգը լռեց, յետոյ «երկու մարմիններ արագ պտոյտ գործելով օդի մէջ, գնացին միասին, ջախջախուելու անդունդի խորքերում... և միմիանց գրկում: Հասօն և Զախէն էին դրանք»...

Բացի մէկ քանի արատներէ, «Լուր-դա-լուր»-ը յաջող է:

ԶԱԽԷՆ

---

Յովակիմ Սողոմանի «Հարազատ Գծեր». Ս.-Պետերբուրգ 1903 թ. դինն է 15 կողէկ.

---

Պ. Յովակիմ Սողոմանը, եթէ հրապարակախօսութիւնը իրեն ասպարէզ ընտրած ըլլար, գուցէ յաջողէր միշակ հրապար-

բակախօս մը դառնալը Բայց դժբախտաբար գեղարուեստական գրականութեան մէջ է մտեր՝ վէպեր, պատմուածքներ արտադրելու ոչ մի շնորհք չունենալով:

«Հարազատ Դժբեր» բաղկացած են երկու պատմուածքներէ «Ձենք ուզում» և «Հին երգ»: Առաջինը՝ քահանայական հարցի շուրջը կը դառնայ, քահանաներուն ոռճիկ նշանակելու և չնշանակելու խնդիրը կը յուզէ, որը աւելի հրապարակախօսութեան, քան գրականութեան շրջանակին մէջ ամփոփուող նիւթ մըն է: Թեմակալ առաջնորդի նախագահութեան տակ ծխական ժողով է նշանակուած՝ քննութեան ենթարկելու, ուսումնասիրելու և վճիռ կայացնելու համար քահանաներու ոռճիկ նշանակելու հարցի մասին: Ժողովէն առաջ, մէկ երկու քահանաներ որ ոռճիկի կողմնակից չեն, խօսք մէկ կ'ընեն, ժողովի ջանքերը ապարդիւն հանելու համար դիմել վիճաբանութիւնը խեղդելու (obstruction) միջոցին: Ու իրենց մէկ քանի արբանեակներու «չենք ուզում, չենք ուզում... մի խօսիր»-ներով կը հասնին իրենց նպատակին: «Նրանք, որոնք հարցին կուսակից էին, խուսափելով սկանդալից լռեցին. իսկ սրբազան նախագահը ըմբռնելու ծխականների սարքած տրամադրութիւնը՝ (?) հարցը վերցրեց մէջտեղից և ժողովը փակեց»:

Երկրորդը՝ «Հին երգ» (գատկական գրոյց) անուղղակի կերպով նոյն թեզի պաշտպանութեան է նուիրուած, թէպէտև գրուածքին տրուած է պատմուածքի ձև:

Աստիճանաւոր Մարկոսեանը՝ այնչափ ոռճիկ միայն կը ստանայ որ տանը ծախքերը ամսէ ամիս հազիւ ծայրը ծայրին կը բերէ: Տօներու առիթով՝ բնականաբար սովորական ծախքերու վրայ յաւելում մը կայ, բայց «գատկական կոչված նուէրները, որոնք տրվում են սովորաբար աստիճանաւորներին ոռճիկից դուրս, խոստանում էին մի քիչ թեթեւցանել նրա դրութիւնը և այդ նուէրների շնորհիւ այդ ամիսը չպիտի նմանէր միւս ամիսներին... Սակայն նրա յոյսերը չարդարացան... «Ձատկական» նուէրներն այս տարի չտրվեցին... և այդ հանգամանքը վշտացրեց պաշտօնեաներին, իսկ Մարկոսեանին՝ իբրև աւելի զգայուն մարդու, խոր վիրաւորանք պատճառեց»:

Թաթախման օրը՝ ընրա ձեռքում մնաց միայն 1 ր. 75 կոպէկ» իր ամսականէն և «այդ փողի մի պատկառելի մասն էլ գնաց իրիկուան ընթրիքի պատրաստութեան»: Մարկոսեանը եկեղեցի գնաց այդ իրիկուն: «Մի նոր միտք ծագեց նրա մէջ (?)»։ Նա գցեց իր աչքերը եկեղեցու դռներին և չվստահացաւ մտնել: Մարկոսեանը մտաբերեց, որ այդ երեկոյ սովորա-

կանից աւելի գանձանակներ պիտի շրջեցնեն: Նրա ծանօթներէից մինը կը շրջեցնէ տեղական հոգաբարձութեան օգտին գանձանակ, մի ուրիշը՝ դպրոցի համար»... Եւ Մարկոսեանը «վճռեց դուրսը մնալ, եկեղեցի չմտնել»:

«Մարկոսեան շարունակ մտածում էր թէ ի՞նչ կ'անէ վաղը, ի՞նչով կը վարձատրէ քահանային: Նրան և տիրացուին ընդունելու համար հարկաւոր է ունենալ առնուազն 1 բուրլի 50 կոպէկ, մինչդեռ նրա գրպանում մնացել է միայն 12 կոպէկ»:

Ու այդ պատական աստիճանաւորը՝ տէրտորը և տիրացուին այցելութենէն խոյս տալու միակ միջոցը կը գտնէ իր դուռը փակել այդ երկիւղած մուրացկաններուն առաջ: Հետեւեալ օրը քահանան «երեք անգամ հրեց դուռը, մի քանի րուպէ սպասեց—բայց բացող չեղաւ... Քահանան ստիպուած եղաւ թողնել ու հեռանալ: Կէս ժամից յետոյ եկան ժամկոչները և ծառաները շնորհաւորելու... Դուռը նոյնպէս փակ գտան»:

Մարկոսեանը կամաւոր բանտարկութեան էր ենթարկել իրան այդ օրը»:

Մենք խորհուրդ պիտի տայինք պ. Սուրվեանին գրականութեան այլ ճիւղերում փորձել իր ոյժերը որովհետեւ նա ի բնէ գեղարուեստագէտի կոչում չունի: Թէ ինչպէս կը գրուին գեղարուեստօրէն առօրեայ հասարակ դէպքերի մասին պարոնը կարող է գաղափար կազմել կարդալով թէկուզ Չեխովի պատմութիւնները... Բեկլետրիստ պէտք է ծնուել, իսկ ձգտիլ այնպիսին դառնալ—անպտուղ ջանք մըն է...

ԶԱԿԷՆ

Վ. Փափագեանի «Առպեռ» պատմութեան, Թիֆլիս 1903 թ. դինն է 15 կողմ:

Ասպետը՝ իդէալիստն է: Այն՝ որ ամէն զոհողութիւն յանձն կ'առնէ, նոյնիսկ մահուան մէջ հաւատարիմ կը մնայ իր իդէալին:

Համալսարանական ուսուցիչ մը «Կովկասի շքեղ ամարանոցներից մէկում» հիւր է ընտանիքի մը մօտ: Հարուստ տան սրահին մէջ, ամբողջ ընտանիքը հաւաքուած է և մտիկ կ'ընէ ուսուցչի ընտրած հետեւեալ պատմութիւնը՝ զոր կը կարդայ տան մեծ աղջիկը:

«Մի անգամ մի դօրեղ ասպետ—պատմում է միջնադարեան մի վէպ—սիրեց մի իշխանուհու: Թողեց հայր ու մայր, թողեց տուն ու տեղ, հեծաւ իր նժոյգ, առաւ իր նիզակ և եկաւ կանգնեց իր իդէալի ամբողջ տակ»: